PROBLEMS IN PSYCOLOGICAL EXPERT EXAMINATION OF CIVIL CASES

Arakelyan A.D., Sargsyan L. K. (Armenian State Pedagogical University, Yerevan, Armenia)
araqelyananna23@aspu.am, sargsyanlevon23@aspu.am
Ներկայացման ամս. 26.07.2021
Գրախոսման ամս. 10.08.2021
Տպագրության ընդունման ամս. 16.09.2021

The paper attempts at presenting the existing problems in the field of forensic psychological examinations in civil cases, which complicate, and in some cases hinder the effective process of psychological examinations. In particular, the paper discusses legal and psychological grounds for appointting a forensic psychological examination in civil cases, professional uncertainties in the examination questions, existing difficulties and issues related to their solution as well as involvement of the parties in the examination.

Keywords: *forensic psychological examination, psychologist-expert, expert issues, examinee, civil cases, parties to the trail.*

DOI: https://doi.org/10.46991/SBMP/2022.5.1.011

Դատական փորձաքննությունների բնագավառը՝ որպես քրեադատավարական պրակտիկայի ուղղություն, մշտապես զարգացման, փորձաքննությունների համակարգում հետազոտական առավել կատարելագործված գործիքակազմի ներդրման կարիք ունի: Այսօր փորձաքննությունների բնագավառում ավանդական մի շարք մեթոդներ այլևս չեն բավարարում դատաքննության պահանջներին, ինչը հանգեցրեց դատաքննչական պրակտիկայում հոգեբանական փորձաքննությունների անհրաժեշտության առավել կարևորմանը: Ժամանակակից արդարադատության համակարգում դատահոգեբանական փորձաքննությունների անհրաժեշտությունը մեծապես կարևորվել է նաև քաղաքացիական դատավարություններում: Արդարադատության համակարգի բարեփոխումների արդյունքում մի շարք քաղաքացիական վեճերի, ամուսնալնտանեկան խնդիրների տևական շահարկվող դատական վեճերի լուծումը իրավապահ համակարգը տեսավ հոգեբանական փորձաքննությունների պրակտիկայում:

Ի տարբերություն միջազգային պրակտիկայի՝ պահպանողական հասարակություններում, այդ թվում նաև Հայաստանում, քաղաքացիական գործերով հոգեբանական փորձաքննությունները բավական քիչ էին նշանակվում՝ պայմանավորված հասարակական կարծրացած գիտակցության, ավանդույթների և սովորույթների առավել գերակայությամբ: Ինչպես դատավարական մյուս բաժիններում, այնպես էլ քաղաքացիական գործերով դատա-

վարություններում հոգեբանական փորձաքննությունների նշանակումը միտված է նպաստելու արդարադատության իրականացմանը՝ մեծացնելով դատարանի ճանաչողական հնարավորությունները քաղաքացիական գործերի քննության և լուծման անկողմնակալ գործընթացում: Քաղաքացիական վարույթ իրականացնող դատարանները հոգեբանական փորձաքննության միջոցով հնարավորություն են ստանում վեր հանել կոնկրետ գործերով ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկատվությունը՝ ուժեղացնելով փաստական տվյալների երբեմն ոչ այդքան ապացուցողական բնույթը:

Դատական փորձաքննությունը փորձագետների կողմից՝ հատուկ գիտելիքների հիման վրա անցկացվող հետազոտություն է, հանդես է գալիս որպես դատավարական իրավունքի ինստիտուտ [1]: Համաձայն Ռ.Գ. Պետրոսյանի մոտեցման՝ դատական փորձաքննությունն ապացույցների հետազոտման, ընկալման և ստուգման գործընթաց է, իսկ եզրակացությունը՝ փորձագիտական հետազոտման արդյունք, փաստական հանգամանքներ պարզելու դատավարական միջոց [2]:

Դատահոգեբանական փորձաքննությունների պրակտիկան փաստում է ոլորտում առկա վիճահարույց հարցեր, խնդիրներ, որոնք հստակեցման ու ճշգրտման կարիք ունեն:

Դրանցից են.

1. Վերլուծված և հստակեցված չէ հոգեբան-փորձագետի հատուկ գիտելիքների համակարգը, ամբողջական մշակվածության չեն ենթարկվել խնդրի օպերացիոնալ-նորմատիվային կողմերը և սահմանված չեն այս հասկացության սահմանները: ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի գլուխ 10, հոդված 85-ում հանդիպում ենք սահմանման, որտեղ ընդհանրական ներկայացված է փորձագետի անձին ներկայացվող պահանջները, պարտականություններն ու իրավունքները [3]: Վերոգրյալում մենք տեսնում ենք փորձագետի գործունեությունը կարգավորող իրավաբանական հիմքերը, որտեղ չկա տարբեր բնագավառների փորձագետների մասնագիտական սահմանազատում և համապատասխան սահմաններ:
2. Միանշանակ չեն պատկերացումները հոգեբանի հատուկ գիտելիքների կիրառման ձևերի մասին, չէ որ հոգեբանական գիտելիքները ծառայում են ինչպես դատահոգեբանական, այնպես էլ հոգեբուժական և համալիր հոգեբանահոգեբուժական փորձաքննություններում: Այս խնդիրների կարգավորման համար անհրաժեշտ է իրավական տեսանկյունից հստակեցնել պահանջները, թե որ փորձաքննություններում հոգեբանական ինչպիսի գիտելիքներ ունեցող մասնագետը կարող է ճանաչվել փորձագետ: Օրինակ՝ հոգեբանահոգեբուժական փորձաքննություններում անհրաժեշտ է կլինիկական հոգեբանի որակավորում ունեցող փորձագետի ընդգրկումը:

3. Հոգեբան-փորձագետի լուծմանը ներկայացվող հարցադրումները երբեմն մինչգիտակարգային են և փորձագիտական տեսանկյունից դժվար լուծելի: Հոգեբանական փորձաքննություններում հանդիպում ենք հարցադրումների, որոնց լուծումը ենթադրում է այլ մասնագետների, օրինակ՝ սոցիալական աշխատողի, մանկավարժի մասնակցություն: Նման դեպքերում փորձաքննության նշանակման համար անհրաժեշտ են մասնագիտական քննարկումներ:
4. Երբեմն, գործի համար անհրաժեշտ փաստական տվյալների ոչ ամբողջական կամ մասնակի բացակայությունը խաթարում է հոգեբանական փորձաքննության արդյունավետ ընթացքը: Այս և նմանատիպ այլ խնդիրներ իրենց արտահայտությունն են գտնում փորձագետին ներկայացված հարցադրումներում: Վերջինս հանգեցնում է հարցերին պատասխանելու անհնարինության, երբեմն էլ՝ մասնագիտական կոմպետենցիաների սահմաններից դուրս գալու. լուծել խնդիրներ, որոնք կանգնած են փորձաքննության այլ տիպերի առջև /օրինակ՝ հոգեբուժական/ կամ այնպիսի խնդիրների լուծման մասնակից լինել, որոնք դատաքննչական մարմինների գործառույթներում են:

Փորձագետին ներկայացված հարցադրումներում երբեմն կարելի է հանդիպել վիճահարույց պահերի: Օրինակ՝ հաշվի առնելով հետազոտվողի հոգեկանի զարգացումը, անհատական առանձնահատկությունները, կարող էր նա ճիշտ ընկալել և ճիշտ ներկայացնել գործի համար կարևոր հանգամանքները և ճիշտ ցուցմունք տալ իր հանդեպ կատարված գործողությունների վերաբերյալ: Պետք է նշենք, որ ցուցմունքների ճշգրտության պարզաբանման հարցը քննչական մարմինների գործառույթներում է: Այն տրամաբանված կլիներ, երբ անհրաժեշտություն կառաջանար նշանակելու հոգեբան-փորձագետի մասնակցություն հարցաքննության գործընթացին, կամ հարցաքննությունը կներկայացվեր հոգելեզվաբանական փորձաքննության:

Անդրադառնանք պրակտիկայում հանդիպող քաղաքացիական գործերով դատահոգեբանական փորձաքննությունների ժամանակ հանդիպող որոշ խնդիրների.

1. Քանի որ դատահոգեբանական փորձաքննության եզրակացությունը՝ որպես գործի հանգամանքների վերաբերյալ հատուկ փաստարկ, ոչ միայն հատուկ գիտելիքների կիրառման արդյունք է, այլև իրավապահ մարմինների, դատարանի, փաստաբանների, փորձագետների փոխներգործության արդյունք, ապա հարցերի ճիշտ մշակումը կարող է վիճահարույց լինել դատաքննչական մարմինների աշխատակիցների համար փորձաքննության նշանակման, փորձագետներին հարցերի ներկայացման և դատական գործընթացում փորձագիտական եզրակացությունների կիրառման համար: Օրինակ՝ ամուսնալուծության և երեխայի բնակության վայրի որոշմանը վերաբերող փորձաքննություններում ներկայացված է պարզաբանում, թե ինչպիսին

է երեխայի ծնողների սոցիալ-բարոյահոգեբանական վիճակը: Հոգեբանական վիճակի գնահատումը միանշանակ հոգեբան-փորձագետի կոմպետենցիաների սահմաններում է, իսկ սոցիալական և բարոյական կողմերի գնահատման հարցը վիճահարույց է: Մեկ այլ օրինակի դեպքում հարցադրում է ներկայացվում հոգեբան-փորձագետին, թե առավելապես որ ծնողի մոտ շահեկան կլինի անչափահասի մշտական բնակությունը կամ արդյոք երեխայի շահերից կբխի երեխայի բնակության վայրը՝ մոր բնակության վայր սահմանելը: Երեխայի շահերի գնահատումը հոգեբան-փորձագետի կոմպետենցիայի շրջանակներում չէ, քանի որ հոգեբանական առումով կարևորվում են ներդաշնակ և առողջ հարաբերությունները երկու ծնողների հետ էլ, իսկ սոցիալ-տնտեսական, կենցաղային, կենսատարածքի հետ կապված շահեկանությունը որոշվում է այլ չափանիշներով: Նման դեպքերում փորձաքննության իրականացումը չի կարող բավարար լինել, անհրաժեշտ կլինի նաև սոցիալական աշխատողի կամ սոցիալական մանկավարժի ընդգրկումը փորձաքննությանը: Ամուսնալուծության և երեխաների բնակության վայրի որոշման հետ կապված փորձաքննության հարցադրումներում օրինակ հանդիպում ենք հետևյալին. 3.5-4 տարեկան երեխայի վերաբերմունքը, գնահատականը ծնողների միջև առկա երեխաների տեսակցության և բնակության վայրի հետ կապված վեճին: Տարիքային այս շրջանում երեխան չի կարող հասկանալ տեսակցության և բնակության հետ կապված վեճի բնույթը, նա կարող է միայն որոշակի հուզական վերաբերմունք ունենալ ծնողների, նրանց հարաբերությունների, վեճերի նկատմամբ:

2. Քաղաքացիական գործերի քննությանը մասնակցող փաստաբանները, իրավաբանները, ինչու չէ՝ երբեմն նաև դատավորները միշտ չէ, որ հստակ են պատկերացնում փորձաքննության իրականացման առանձնահատկությունները: Դրա արդյունքում, հաճախ արդյունավետ չէ վերջիններիս համագործակցությունը. օրինակ՝ փորձաքննության միջնորդություն ներկայացրած փաստաբանը կարող է նշել, որ իր կողմից ներկայացված հարցադրումն այնպես չէ շարադրված, ինչպես որ պետք էր, մինչ դեռ դատարանի որոշման մեջ այլ կերպ է հնչում հարցադրումը: Այստեղ խոսքը վերաբերվում է ինչպես անհամաձայնություններին, այնպես էլ համակարգային տարբերվող մոտեցումներին: Խոսքը վերաբերվում է փաստաբանի, դատախազության, դատարանի գործին վերաբերող տարբերվող դրդապատճառներին: Սակայն, պետք է նշենք, որ դատարանը փորձաքննություն նշանակում է անկախ դատավորի՝ հատուկ գիտելիքներին տիրապետելու հանգամանքից, իսկ ըստ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ հոդվածի՝ հետաքննության մարմնի հատուկ գիտելիքների առկայությունը չի ազատում համապատասխան դեպքերում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունից [3]:

3. Դատական փորձաքննությունը նաև դատարանի, փորձագետի և դատավարության այլ մասնակիցների միջև տեղի ունեցող առանձնահատուկ ընթացակարգային գործունեություն է: Վերջինիս բնորոշ է դատավարական իրավունքի նորմերով կարգավորվող ընթացակարգ, որոնցով պետք է ղեկավարվեն դատական գործընթացի բոլոր մասնակիցները՝ դատական փորձաքննություն նշանակելու, կատարելու, դրա արդյունքների գնահատման հարաբերություններում: Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ փորձաքննություն նշանակելիս և կատարելիս, կասկածյալը, մեղադրյալը և տուժողն իրավունք ունեն մինչև փորձաքննություն կատարելը ծանոթանալ փորձաքննություն նշանակելու մասին քննիչի որոշմանը և ստանալ իրենց իրավունքների պարզաբանումը: Այդ իմաստով՝ գործին մասնակցող անձանց փորձաքննություն նշանակելու մասին որոշման հետ ծանոթացնելիս անհրաժեշտ է հստակ պարզաբանել ինչպես նրանց իրավունքներն ու պարտականությունները, այնպես էլ դրանց վերաբերյալ օրենքով նախատեսված դրույթները: Քաղաքացիներն այս հարցերում, իհարկե, քիչ գիտելիքներ ունեն, նրանք վստահում են մասնագետներին, բայց նրանց տեղեկություն չի փոխանցվում կամ այն թերի է, կամ համարժեք չի ընկալվում քաղաքացիների կողմից այդ փորձաքննության նշանակման անհրաժեշտության, գործընթացի կազմակերպման առանձնահատկությունների մասին, կամ օրենքով նախատեսված հրաժարման հետևանքների մասին: Օրինակ՝ կարելի է հանդիպել իրադրության, երբ հայցվոր կողմը փորձագետներից է հետաքրքրվում վճարման հարցի մասին՝ պարզաբանելով, որ եթե ինքը պետք է վճարի՝ ապա հրաժարվում է մասնակցել փորձաքննության: Այս դեպքում փորձաքննությանը ներկայացած անձը չի կարողանում հասկանալ թե դատարանի որոշմամբ նշանակված փորձաքննության համար ինչու պետք է ինքը վճարի: Հրաժարվելով փորձաքննությանը մասնակցությունից՝ փորձագետից է հետաքրքրվում դրա հետևանքների մասին: Նման հարցերի քննարկումն ու մեկնաբանությունը ամենևին հոգեբան-փորձագետների մասնագիտական կոմպետենցիաների սահմաններում չեն:

4. Փորձաքննությանը ներկայացվող նյութերի, անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրման, դրանց ամբողջականության առկայությունը, այդ թվում փորձաքննություն նշանակված անձին առնչվող հարցերի հստակեցումը: Գործնականում հանդիպում են իրադրություններ, երբ մի փորձաքննության նշանակման, դրա իրականացման համար անհրաժեշտ նյութերի տրամադրման, փորձաքննվողին փորձաքննությանը ներկայանալու ընթացքը կարող են տևել ամիսներ: Օրինակ՝ փորձաքննություն նշանակելու մասին որոշում կայացնելու հետ մեկտեղ, որպես կանոն, կասեցվում է գործի քննությունը մինչև փորձագետի եզրակացությունը ստանալը, որն էլ հաճախ կարող է տևել ամիսներ՝ փորձաքննության համար անհրաժեշտ հիմքերի բացակայության արդյունքում: Ավելին, երբեմն փորձագետն իր ձեռքն է վերց-

նում փորձաքննության իրականացման համար լրացուցիչ հարցեր, որն էլ հակադրվում է մասնագիտական և էթիկական սկզբունքներին:

Ի տարբերություն քրեական գործերով նշանակվող փորձաքննությունների, որտեղ փորձաքննության մասնակիցը տուժողն է, մեղադրյալը, վկան, փորձաքննությանը ներկայացված հարցադրումները վերաբերվում են վերոգրյալ անձանց հոգեբանական հատկություններին ու հոգեվիճակներին, ապա քաղաքացիական գործերով փորձաքննություններում մի շարք հարցերի հստակեցման կարիք կա. հարցադրումներից որոշները ենթադրում են միայն երեխայի հոգեբանական փորձաքննության, իսկ մյուսները՝ ծնողներից մեկի կամ երկուսի, երբեմն նաև՝ ընտանիքի մյուս անդամների մասնակցությունը: Նման դեպքերում հոգեբանական փորձաքննության իրականացման սահմաններն ընդլայնվում են, դժվարություններ են առաջանում ստեղծված իրադրությունում կոնֆլիկտող կողմերի հետ կապի հաստատման, նրանց փորձաքննության կազմակերպմանը համատեղ ներկայանալու հարցում: Վերջինս առաջացնում է որոշ խնդիրներ, ինչի լուծման ուղիները հաճախ բացակայում են, միակը՝ դատարան գրավոր տեղեկության փոխանցումն է փորձաքննության իրականացման անհնարինության մասին: Քաղաքացիական գործերով նշանակվող հիմնական հոգեբանական փորձաքննությունները նշանակվում են ամուսնաընտանեկան կոնֆլիկտների, ամուսնալուծությունների ընթացքում և դրա արդյունքում երեխաների բնակության վայրի սահմանման, նրանց խնամատարության և ծնողական իրավունքի իրացման հարցերով: Այս դեպքում առաջնային խնդիրներից են երեխայի զարգացման տարիքային բնութագրերի գնահատումը, նրա հոգեկանի զարգացման յուրահատկությունները՝ կախված ընտանեկան դաստիարակության պայմաններից, ծնողներից յուրաքանչյուրի վերաբերմունքով, երեխայի հոգեկան վիճակի և զարգացման վրա ազդեցության գնահատմամբ: Փորձագիտական նման ուսումնասիրությունները նպաստում են ամուսնաընտանեկան հարաբերություններում երեխայի գերակա շահի պաշտպանությանը, նրա ֆիզիկական և հոգեկան առողջության ապահովմանը:

Նման իրադրությունները լուծելու համար անհրաժեշտ է նշանակել համալիր հոգեբանական և հոգեբուժական փորձաքննություն՝ պարզելու հետևյալ հանգամանքները.

- ✓ երեխայի զարգացման համապատասխանությունը տարիքային նորմատիվ ցուցանիշներին՝ կապված ընտանեկան հարաբերությունների դինամիկայով,
- ✓ ծնողներից յուրաքանչյուրի անհատական հատկությունների, հոգեկան վիճակի ու վարքի, ընտանեկան հարաբերությունների ազդեցությունը երեխաների հոգեկանի զարգացման վրա,

- ✓ երեխայի վերաբերմունքը և հուզական հարաբերությունները ծնողներից յուրաքանչյուրի նկատմամբ՝ հաշվի առնելով նրա տարիքը և մտավոր զարգացման մակարդակը,
- ✓ հոգեբանական բնույթի իրավաբանական նշանակալի հանգամանքների գնահատում՝ երեխային մի ծնողից մյուսի մոտ տեղափոխելը, առանձին ապրող ծնողի մասնակցությունը խնամատարությանը, ծնողական իրավունքի սահմանափակումը, հոգեկան առողջության սահմանները, փոխհարաբերությունները, որդեգրման դադարեցումը և այլն [4, էջ 6-7]:
- ✓ Քաղաքացիական գործերով փորձաքննությունում հոգեբանական հատուկ գիտելիքների կիրառման, այս ոլորտի արդյունավետության մակարդակը բարձրացնելու համար անհրաժեշտ է.

1. ճշգրտել կազմակերպչական հարցերը, հստակեցնել հոգեբանական փորձաքննության ընթացակարգը, ժամկետները, կանոնակարգել կողմերի գործողությունների սահմանները,
2. դրանք արտացոլել իրավական նորմերում կամ բխեցնել իրավական կանոններից,
3. հստակեցնել փորձագետի աշխատանքին վերաբերող տեսամեթոդաբանական խնդիրները:

Հիմնվելով հոգեբանական տեսության և փորձարարական մեթոդաբանության վրա՝ նշենք, որ քաղաքացիական գործերով փորձաքննություններում փորձագետի պարզաբանմանը ներկայացվող հարցադրումները խմբագրման կարիք ունեն: Այս տեսանկյունից քաղաքացիական գործերով հոգեբանական փորձաքննությունները կարող են պատասխանել հետևյալ հարցադրումներին.

- ✓ փորձաքննվող անձի կողմից կնքված գործարքների բովանդակությունը հասկանալու աստիճանի և գիտակցված որոշումներ ընդունելու նրա ընդունակությունների հաստատումը,
- ✓ գործունակ սուբյեկտի մոտ այնպիսի ոչ ախտաբանական հոգեկան շեղումների բացահայտումը, որպիսիք խոչընդոտում են իրականության համարժեք արտացոլմանը,
- ✓ ամուսինների հոգեբանական համատեղելիության, էպիզոդիկ կոնֆլիկտների վերացման հնարավորությունների հաստատումը,
- ✓ ծնողներից յուրաքանչյուրի, նաև որդեգիրների և խնամակալների հետ երեխաների հոգեբանական համատեղելիության որոշումը,
- ✓ երեխաների դաստիարակությունն ապահովելու ուղղությամբ կոնկրետ անձանց դերային գործառույթների կարևորումն ու շեշտադրումը,
- ✓ գործի համար նշանակալի իրադրությունը ճիշտ ըմբռնելու և դրանց մասին համարժեք ցուցմունքներ տալու անձի ընդունակության հաստատումը:

Այս հարցերի լուծումը կարող է բարձրացնել փորձագիտական հետազոտությունների անցկացման արդյունավետության մակարդակը՝ հստակեցնելով դատահոգեբանական փորձաքննության տեսամեթոդաբանական հիմքերը, յուրաքանչյուր տեսակում հոգեբանական ուսումնասիրության նպատակը, օբյեկտն ու առարկան, դրան հասնելու մեթոդներն ու եղանակները, փորձագետի կոմպետենցիաների սահմանները, եզրակացության բովանդակության գրագետ ձևակերպումը: Ուստի, կարևորում ենք երկու համակարգերի՝ իրավաբանության և հոգեբանության, հիմնային համագործակցությունը դատական փորձաքննությունների նշանակման, կազմակերպման, իրականացման գործընթացների շրջանակներում:

Գրականություն

1. Փորձաքննությունը քաղաքացիական գործերով դատական վարույթի շրջանակներում: /Հեղ. Խումբ: Գիտ. Խմբ. Ա. Եզեկյան – Եր.: ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրո, 2014. – 299 էջ:
2. **Պետրոսյան Ռ.Գ.** ՀՀ քաղաքացիական դատավարություն: Եր.: 2012, 320 էջ:
3. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք: http://www.irtek.am/views/act.aspx?aid=150022
4. **Сыропятов О.Г., Дзеружинская Н.А., Солдаткин В.А.** Судебная экспертиза психического здоровья в гражданском процессе. ГБОУ ВПО РостГМУ Минздравсоцразвития России, Украинская военно-медицинская академия, 2012. – 160 с.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Առաքելյան Ա. Դ., Սարգսյան Լ. Կ. (Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան)

Հոդվածը նվիրված է քաղաքացիական գործերով դատահոգեբանական փորձաքննությունների բնագավառում գոյություն ունեցող խնդիրներին, որոնք դժվարացնում, որոշ դեպքերում, անգամ խոչընդոտում են հոգեբանական փորձաքննությունների արդյունավետ ընթացքին: Աշխատանքում քննարկվում են քաղաքացիական գործերով դատահոգեբանական փորձաքննության նշանակման իրավահոգեբանական հիմքերը, փորձաքննությանը առաջադրված հարցադրումներում առկա մասնագիտական անորոշությունները, գործով անցնող կողմերի փորձաքննությանն ընդգրկվելը, առկա դժվարությունները և դրանց լուծմանը վերաբերվող հարցերը:

Հանգուցային բառեր՝ *դատահոգեբանական փորձաքննություն, հոգեբան-փորձագետ, փորձագիտական խնդիրներ, փորձաքննվող, քաղաքացիական գործեր, դատավարական կողմեր:*

ПРОБЛЕМЫ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ ГРАЖДАНСКИХ ДЕЛ

Аракелян А.Д., Саргсян Л.К. (Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна, Ереван, Армения)

В статье предпринята попытка представить существующие проблемы в области судебно-психологической экспертизы по гражданским делам, которые усложняют, а в некоторых случаях препятствуют эффективному процессу психологических экспертиз. В статье рассматриваются правовые и психологические основания назначения психологической экспертизы по гражданским делам, профессиональная неопределенность вопросов экспертизы, существующие трудности и вопросы, связанные с их решением, а также участие сторон в экспертизе.

Ключевые слова*: судебно-психологическая экспертиза, психолог-эксперт, экспертные вопросы, испытуемый, судебные стороны, гражданские дела.*